

ոռւթեանց երևոյթներէն . ստուգութիւնն այն է որ կրօնի հսզը իրեն արժանի տեղը չունի այսօր պատասխանառու . Մարմիններու մտադրադութեանց մէջ :

Թողլով բազում ուրիշ պարագաներ , և մեր ակնարկը դարձնելով միայն դէպի վարժարանները , տիրութեամբ պիտի հաստատենք թէ կրօնի դասը եթէ ոչ ամէնէն արհամարհուած այլ դէֆ անաւազուած դիրքի մը վրայ կը զանուի մեր դպրոցներու թէ ծրագրի և թէ ժամանակացոյցի զլուխներուն մէջ : Իրեն ուսում՝ չի ներկայացներ անիլա մեծ արժէք , հարկաւորապէս ընդայնուած չըլլալով նախ նիւթը , և յետոյ ճշգրիտ ուղղութեան մը վրայ լարուած չըլլալով դասաւանդութեան մեթուր :

Պիտի չկնանք հոս մանրամանութեանց մէջ մտնել այս՝ ինչպէս նաև ուսուցիչներու և դասազիրքերու և յարակից ուրիշ հանգամանքներու վերաբերմամբ , յաջորդ յօդուածի մը թողլով անոնց աւելի հանգամանօրէն նկատառումը . բայց չենք կրնար վերջացնել այս տողերը առանց շեշտելու թէ բուն կրօնական կեանքը կրնայ մտահողիչ կացութեան մը վերածուիլ մեր մէջ հետզհետէ զիսաւորապէս այն պատճառաւ որ նոր սերունդին դաստիարակութեան զործին մէջ , դպրոցներէն ներս կամ դուրս , կրօնական կրթութեան չէ ընծայուած ուշ շաղրութիւնն ու խնամքը , բան մը՝ որուն ամենէն աւելի մտադիր պէտք է լինին անոնք որ կոչում և պաշտօն ունին վարելու դաստիարակութեան զործը և հակելու ազգին բարոյական կեանքին վրայ :

\* \* \*

## ՔԱՂՑՐ ՄԱՀԸ

Ա

Տերեւի մը վրայ վրտիս ,  
Խոր զիւերուան մէջ ի քուն ,  
Կը պըսպըրլար շաղի ժիր մ' ,  
Արեգակէն շատ հեռուն :

«Պիտի չկրնա՞մ , ա՞խ , երեխ ,  
Բորնկած շողէ մը բոսր ,  
Արհամարհուած կարիլս նէֆ ,  
Տեսնել ծագող տիւն աղուոր :»

Ու հրելով սուերը սեղմ ,  
Սաղարթէն դուրս ելաւ մեղմ .  
Ծագեց արեւն երբ աչփին :

Անդ լոյսէն մահացած ,  
Սլացաւ , շողի օդայած ,  
Շողի մը մէջ՝ դէպ երկին :

*Mrq. Թ. Ե. Գ.  
15 հուն . 1931 , Գանիիրէ*

Բ

Ս.յդ կարիլին պէս զոփուն ,  
Աղամանդին պէս այդ լոյծ ,  
Քեզ կը կանչեմ , լոյս անհուն .  
Ե'լ երկինքէն անմատոյց :

Խոնջ՝ ըստուերէն մըշամուայլ ,  
Դարձած եմ նեւս խըզամիթ .  
Սըրտիս՝ շողիքը լուսափայլ  
Թող նըսուլէ՛ անիքրիք :

Եմ դիխս , իմ կրօնին ես դուն զորդ ,  
Ճառագայթիդ ներեւ յորդ ,  
Ճըմարտորին , կ'իյնամ զոհ :

Ճըմարտին ծանր է տեսնել ,  
Պիտին տեսնելին է նիւծել ,  
Ինչ պոյք , աչք իմ , դիտէ զոհ :

J. M. GUYAU